

**ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝
29.01.2021թ. նիստի N 6 արձանագրություն**

Օրակարգ

1. 2020-2021 ուս.տարվա առկա ուսուցման առաջին քննաշրջանի արդյունքների ամփոփում:
2. Անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
3. "ԵՊՀ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի 'Օտար լեզուներ և հաղորդակցություն' բակալավրական կրթական ծրագրում դասավանդող դասախոսական կազմին ներկայացվող պահանջներ"-ի քննարկման և կյանքի կոչելու հարցը
4. Ընթացիկ հարցեր:

29.01.2021թ. գիտխորհրդի նիստին 36 անդամներից ներկա էին 30-ը :

ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը ողջունեց գործընկերներին, հաջողություններ մաղթեց երկրորդ կիսամյակի դասընթացների մեկնարկի կապակցությամբ՝ հույս հայտնելով, որ հաջորդող գիտխորհրդի նիստերը կայանան դեմ առ դեմ ձևաչափով, ոչ թե առցանց :

1. Անդրադառնալով օրակարգի առաջին հարցին, Գ.Բարսեղյանը ամփոփեց 2020-2021 ուս.տարվա առկա ուսուցման առաջին քննաշրջանի արդյունքները: Նա հավելեց, որ այս հարցի կապակցությամբ ֆակուլտետը մեծ խնդիրներ ու անհանգստություններ չունի, քանի որ լուծարք մնացած ուսանողների քանակը մեծ չէ: Նա մանրամասն ներկայացրեց նաև ԵԼՀ ֆակուլտետի բոլոր բաժինների լուծարք մնացած ուսանողների տվյալները և քանակը :

2. Գ.Բարսեղյանը ներկայացրեց անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողներին: Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց, որ երկրորդ կիսամյակում անվանական կրթաթոշակ կստանան հետևյալ ուսանողները.

1. Քոսյան Անուշ /արտ. գրակ., մագիստրատուրա 2-րդ կուրս, Վ . Սարոյանի անվան կրթաթոշակ /:
 2. Վարպետյան Աննա /միջազգային գործարար հաղորդակցման լեզվամշակույթ, մագիստրատուրա 2-րդ կուրս, Ֆ. Վերֆելի անվան կրթաթոշակ/:
 3. Մարոզյան Անուշ /ԼՄՀ, գերմ. լեզու և գրակ., մագիստրատուրա 2-րդ կուրս, Հ.Աճառյանի անվան կրթաթոշակ/:
- Քվեարկությունը միաձայն :

3. ԼՄԵՑԻՆ - "ԵՊՀ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի 'Օտար լեզուներ և հաղորդակցություն' բակալավրական կրթական ծրագրում դասավանդող դասախոսական կազմին ներկայացվող պահանջներ"-ի քննարկման և կյանքի կոչելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Ս. Գասպարյանը ներկայացրեց նշված փաստաթուղթը:

Սույն փաստաթուղթը, մշակված անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Սեդա Գասպարյանի և ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ռուզաննա Առաքելյանի կողմից, ներկայացվում է գիտխորհրդի քննարկմանը և երաշխավորությանը:

Բուհական կրթության ոլորտի ամենապահանջված հարցը կրթության բարձր որակի ապահովումն է, որն էլ իր հերթին ենթադրում է դասավանդող անձնակազմի բարձր որակ և դասավանդման հմտությունների առկայություն: Այս նկատառումներից ելնելով՝ դասախոսների ընտրությունը պետք է իրականացվի որոշակի չափանիշներով: Գիտխորհրդի ուշադրությանը ներկայացվող մշակված չափանիշները միտված են դասախոսի բարձր որակների ապահովմանը: (փաստաթուղթը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ – Միաձայն քվեարկության արդյունքում երաշխավորել ներկայացված փաստաթուղթը :

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

- ԵԼՀ ֆակուլտետի փոխդեկան բ.գ.թ. Ն.Մադոյանը ներկայացրեց արտադրական պրակտիկային վերաբերող հարցը, որը կմեկնարկի փետրվարի 8-ին, կտևի մինչև փետրվարի 28-ը: Մ.գ.թ., պրոֆեսոր Ի.Կարապետյանը առաջարկեց, որ ուսանողները կարող են իրենց կատարած աշխատանքի արդյունքները ներկայացնել առցանց, քանի որ այդպես կատարած աշխատանքը ավելի լավ է երևում, իսկ ղեկավարները կարող են այդ ձևաչափով հետևել արդյունքներին: Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ բ.գ.դ., պրոֆեսոր Ս. Գասպարյանը կարծիք հնչեցրեց այս հարցի կապակցությամբ, հավելելով, որ պ-ն Կարապետյանի նկատառումը կարող է ավելի ուղղակիորեն վերաբերել մանկավարժական պրակտիկա իրականացնելու գործընթացին :
- Գ.Բարսեղյանը գործընկերների հետ քննարկեց երկրորդ կիսամյակի դասերի կազմակերպման հարցը՝ հավելելով, որ հարցը քննարկվել է ԵՊՀ ռեկտորի հետ, որի արդյունքում որոշվել է՝ ամեն ֆակուլտետ ինքնուրույն որոշում կայացնի այս հարցի լուծման կապակցությամբ: Որոշվել է անցնել դասերի անցկացման հիբրիդային տարբերակի : Պետք է նշել նաև, որ մասնաշենքում ուսանողների թիվը չպետք է գերազանցի 150 –ը, անհրաժեշտաբար պետք է պահպանվի նաև համաճարակային բոլոր կանոնները: Որոշվել է՝ ԵԼՀ առաջին կուրսի ուսանողները մասնագիտական առարկաները կանցկացնեն

համալսարանում /դեմ առ դեմ/, իսկ դասախոսությունները՝ առցանց : Մնացած կուրսերը բոլոր դասերը կանցկացնեն առցանց :

- ԵԼՀ ֆակուլտետի փոխդեկան դոցենտ Գ.Գրիգորյանը խնդրեց իր գործընկերներին՝ ինչպես առաջին կիսամյակի ընթացքում, այնպես էլ երկրորդ կիսամյակում մեծ ուշադրություն դարձնել դասերի կազմակերպման գործընթացին : Դասապրոցեսի ու բացակայությունների վերաբերյալ խնդիրների մասին ահազանգել կիսամյակի ընթացքում, որպեսզի ծագած խնդիրներին համարժեք ու արագ լուծում տրվի :
- ԵԼՀ ֆակուլտետի փոխդեկան բ.գ.թ., Ն. Մադոյանը հայտնեց գործընկերներին, որ յուրաքանչյուր ամբիոն ներկայացնի իր նախընտրած դոցենտի և պրոֆեսորի տվյալներ՝ առաջիկա մրցույթին մասնակցելու համար :

ԵԼՀ ֆակուլտետի

դեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝



Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝



Մ.Դալայան

29.01. 2021թ.